Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2023 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության պետ՝

Ղելլի Սարոյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԱՍԻՆ

2023

Հայաստանի Հանրապետության կառավարությունը
և
Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը,

ելնելով Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններից,

կամենալով ամրապնդել և խորացնել այս բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով,

գիտակցելով, որ այդ հարաբերությունների պահպանումը կազմում է սույն Համաձայնագրի հիմքը,

մտադրություն ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի պահանջներին համապատասխանող զարգացմանը,

վկայակոչելով 2023թ. նոյեմբերի 21-ի միջկառավարական բանակցությունները,

համաձայնության եկան հետևյալի շուրջ.

Հոդված 1

(1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ ընդունող կողմերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից (ՎՎԲ) ստանալու հետևյալ գումարները.

1. ընդհանուր մինչև 26 000 000 եվրո (բառերով՝ քսանվեց միլիոն եվրո) վարկ՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգարդյունավետության զարգացում. փուլ IV» ծրագրի համար, եթե ուսումնասիրությունները հաստատեն ծրագիրն օժանդակելու նպատակահարմարությունը,

2. մինչև 2 000 000 եվրո (բառերով՝ երկու միլիոն եվրո) դրամաշնորհ՝ 1-ին կետում նշված ծրագրի իրականացման և խորհրդատվության համար անհրաժեշտ հարակից միջոցառումների համար:

(2) Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուների հնարավորություն է տալիս ստանալու նաև

1. մինչև 40 000 000 եվրո (բառերով՝ քառասուն միլիոն եվրո) արտոնյալ վարկ «Վերականգնվող էներգետիկայի և էներգարդյունավետության զարգացում. փուլ V» ծրագրի համար, որը Վերականգնման վարկերի բանկի միջոցով հատկացվում է Զարգացման հանրային համագործակցության շրջանակում, ինչպես նաև

2. մինչև 1 000 000 եվրո (բառերով՝ մեկ միլիոն եվրո) դրամաշնորհ՝ 1-ին կետում նշված ծրագրի իրականացման և խորհրդատվության համար անհրաժեշտ հարակից միջոցառումների համար,

եթե ուսումնասիրությունները հաստատեն ծրագրերն օժանդակելու նպատակահարմարությունը, և ռիսկային իրավիճակը Հայաստանի Հանրապետությանը վարկեր տրամադրելու առումով չվատթարանա:

(3) Սույն Համաձայնագիրը վերաբերում է նաև անհրաժեշտության դեպքում տրամադրվող այնպիսի լրացուցիչ դրամաշնորհների, որոնք ուղղվում են 1-ին հոդվածում նշված ծրագրերի նախապատրաստմանը կամ անհրաժեշտ հարակից միջոցառումներին, եթե կառավարությունները երկուստեք ցանկանում են շարունակել օժանդակությունը:

Հոդված 2

(1) 1-ին հոդվածում նշված գումարի օգտագործումը և այն պայմանները, որոնցով այդ գումարը տրամադրվում է, ինչպես նաև հանձնարարականներ տալու ընթացակարգը սահմանվում են Վերականգնման վարկերի բանկի և վարկեր ընդունողների միջև կնքվող պայմանագրերով, որոնք ենթարկվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությանը:

(2) 1-ին հոդվածում նշված գումարների հատկացումը անփոխարինաբար չեղարկվում է, եթե 1-ին պարբերությունում նշված պայմանագրերը չեն կնքվում հատկացման տարվան հաջորդող հինգ տարիների ընթացքում: Այդ գումարների համար սահմանված ժամկետն ավարտվում է 2028թ. նոյեմբերի 21-ին: Եթե 1-ին պարբերությունում նշված պայմանագրերը նախատեսված ժամանակահատվածում կնքված են լինում հատկացումների միայն մի մասի համար, ապա չեղարկման այս դրույթը վերաբերում է միայն այդ պայմանագրերով դեռևս չամրագրված առանձին գումարներին:

(3) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե վարկառուն ինքը կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը չեն, երաշխավորում է Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն 1-ին պարբերության համաձայն կնքվելիք վարկային պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների:

(4) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե դրամաշնորհներ ստացողն ինքը կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը չեն, Վերականգնման վարկերի բանկին տալիս է երաշխիք, որ կկատարվեն հետվճարման այն պահանջները, որոնք կարող են ծագել 1-ին պարբերության համաձայն կնքվելիք դրամաշնորհային պայմանագրերից:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Վերականգնման վարկերի բանկին ազատում է ուղղակի հարկերից, որոնք Հայաստանի Հանրապետությունում ենթակա են վճարման՝ կապված 1-ին հոդվածում նշված ծրագրերի կամ 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման հետ:

Հոդված 4

(1) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությանը ծանուցում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին: Հիմք է ընդունվում ծանուցումն ստանալու օրը:

(2) Սույն Համաձայնագրի՝ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո: ՄԱԿ-ի քարտուղարության կողմից գրանցման հաստատումից անմիջապես հետո Համաձայնագրի մյուս կողմին ՄԱԿ-ում Համաձայնագրի գրանցման համարի փոխանցմամբ ծանուցվում է կատարված գրանցման մասին:

(3) Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամանակով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել այն՝ դիվանագիտական ճանապարհով գրավոր ծանուցելու միջոցով: Լուծումն սկսում է գործել մյուս Կողմում ծանուցման մուտքագրվելուն հաջորդած 12 ամիս ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

(4) Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ ծագող վեճերը լուծվում են Համաձայնագրի կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

Կատարված է Երևան քաղաքում .....31.03.25.....-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և գերմաներեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝	Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության կողմից՝

Abkommen

zwischen

der Regierung der Republik Armenien

und

der Regierung der Bundesrepublik Deutschland

über

Finanzielle Zusammenarbeit

2023

Die Regierung der Republik Armenien
und
die Regierung der Bundesrepublik Deutschland

im Geiste der bestehenden freundschaftlichen Beziehungen zwischen der Republik Armenien und der Bundesrepublik Deutschland,

in dem Wunsch, diese freundschaftlichen Beziehungen durch partnerschaftliche Finanzielle Zusammenarbeit zu festigen und zu vertiefen,

in dem Bewusstsein, dass die Aufrechterhaltung dieser Beziehungen die Grundlage dieses Abkommens ist,

in der Absicht, zur sozialen, wirtschaftlichen und umweltgerechten Entwicklung in der Republik Armenien beizutragen,

unter Bezugnahme auf das Protokoll der Regierungsverhandlungen vom 21. November 2023

sind wie folgt übereingekommen:

Artikel 1

(1) Die Regierung der Bundesrepublik Deutschland ermöglicht es der Regierung der Republik Armenien oder anderen, von beiden Regierungen gemeinsam auszuwählenden Empfängern, von der Kreditanstalt für Wiederaufbau (KfW) folgende Beträge zu erhalten

1. Darlehen von insgesamt bis zu 26 000 000 Euro (in Worten: sechsundzwanzig Millionen Euro) für das Vorhaben „Ausbau Erneuerbare Energien und Energieeffizienz Phase IV“, wenn nach Prüfung die Förderungswürdigkeit dieses Vorhabens festgestellt worden ist.

2. Zuschüsse für notwendige Begleitmaßnahmen zur Durchführung und Betreuung für das unter Nummer 1 genannte Vorhaben bis zu 2 000 000 Euro (in Worten: zwei Millionen Euro).

(2) Die Regierung der Bundesrepublik Deutschland ermöglicht es der Regierung der Republik Armenien oder einem anderen von beiden Regierungen gemeinsam auszuwählenden Darlehensnehmer darüber hinaus:

1. für das Vorhaben „Ausbau Erneuerbare Energien und Energieeffizienz Phase V“ ein vergünstigtes Darlehen der KfW, das im Rahmen der öffentlichen Entwicklungszusammenarbeit gewährt wird, bis zu 40 000 000 Euro (in Worten: vierzig Millionen Euro) sowie

2. Zuschüsse für notwendige Begleitmaßnahmen zur Durchführung und Betreuung für das unter Nummer 1 genannte Vorhaben bis zu 1 000 000 Euro (in Worten: eine Million Euro),

zu erhalten, wenn nach Prüfung die Förderungswürdigkeit des Vorhabens festgestellt worden ist und sich die Risikosituation für die Kreditvergabe an die Republik Armenien nicht verschlechtert hat.

(4) Dieses Abkommen gilt auch für gegebenenfalls zusätzlich bereitgestellte Zuschüsse zur Vorbereitung oder für notwendige Begleitung der in Absatz 1 und 2 genannten Vorhaben, sofern beide Regierungen die Förderung weiterführen wollen.

Artikel 2

(1) Die Verwendung der in Artikel 1 genannten Beträge und die Bedingungen, zu denen sie zur Verfügung gestellt werden, sowie das Verfahren der Auftragsvergabe bestimmen die zwischen der KfW und den Empfängern der Darlehen und der Zuschüsse zu schließenden Verträge, die den in der Bundesrepublik Deutschland geltenden Rechtsvorschriften unterliegen.

(2) Die Zusage der in Artikel 1 genannten Beträge entfällt ersatzlos, soweit nicht innerhalb von fünf Jahren nach der Zusage die in Absatz 1 genannten Verträge geschlossen werden. Für diese Beträge endet die Frist mit Ablauf des 21. November 2028. Sollten nur für einen Teil der Zusagen in dem vorgesehenen Zeitraum die in Absatz 1 genannten Verträge geschlossen worden sein, so gilt diese Verfallsklausel nur für die noch nicht durch diese Verträge gebundenen Teilbeträge.

(3) Die Regierung der Republik Armenien, soweit sie nicht selbst Darlehensnehmer ist, oder nicht die Zentralbank der Republik Armenien, wird gegenüber der KfW alle Zahlungen in Euro in Erfüllung von Verbindlichkeiten der Darlehensnehmer aufgrund der nach Absatz 1 zu schließenden Darlehensverträge garantieren.

(4) Die Regierung der Republik Armenien, soweit sie nicht selbst Empfänger der Zuschüsse ist, oder nicht die Zentralbank der Republik Armenien, wird die Erfüllung etwaiger Rückzahlungsansprüche, die aufgrund der nach Absatz 1 zu schließenden Zuschussverträge entstehen können, gegenüber der KfW garantieren.

Artikel 3

Die Regierung der Republik Armenien befreit die KfW von direkten Steuern, die im Zusammenhang mit den in Artikel 1 genannten Vorhaben oder dem Abschluss und der Durchführung der in Artikel 2 Absatz 1 genannten Verträge in der Republik Armenien erhoben werden.

Artikel 4

(1) Dieses Abkommen tritt an dem Tag in Kraft, an dem die Regierung der Republik Armenien der Regierung der Bundesrepublik Deutschland mitgeteilt hat, dass die innerstaatlichen Voraussetzungen für das Inkrafttreten erfüllt sind. Maßgebend ist der Tag des Eingangs der Mitteilung.

(2) Die Registrierung dieses Abkommens beim Sekretariat der Vereinten Nationen nach Artikel 102 der Charta der Vereinten Nationen wird unverzüglich nach seinem Inkrafttreten von der Republik Armenien veranlasst. Die andere Vertragspartei wird unter Angabe der VN-Registrierungsnummer von der erfolgten Registrierung unterrichtet, sobald diese vom Sekretariat der Vereinten Nationen bestätigt worden ist.

(3) Dieses Abkommen wird auf unbestimmte Zeit geschlossen. Jede Vertragspartei kann es jederzeit schriftlich auf diplomatischem Wege kündigen. Die Kündigung wird am ersten Tag des Monats wirksam, der auf einen Zeitabschnitt von zwölf Monaten nach Eingang der Notifikation folgt.

(4) Streitigkeiten über die Auslegung oder Anwendung dieses Abkommens werden durch die Vertragsparteien gütlich im Rahmen von Gesprächen beziehungsweise Verhandlungen beigelegt.

Geschehen zu Eriwan am .....31.03.25..... in zwei Urschriften, jede in armenischer und deutscher Sprache, wobei jeder Wortlaut gleichermaßen verbindlich ist.

Für die Regierung der Republik Armenien	Für die Regierung der Bundesrepublik Deutschland